ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

N 435-Ա «13» օգոստոսի 2024թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԽՊՐԱԾՈՐ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԻՆԵՎԱՐԴ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԱԼԻԿՈ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի պահանջներն ու Գինեվարդ Ղուկասյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գինեվարդ Ղուկասյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2024 թվականի օգոստոսի 16-ից 2024 թվականի սեպտեմբերի 19-ը ներառյալ՝ 30 աշխատանքային օր:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն

Գինեվարդ Ղուկասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և պարտականությունների կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Վալիկո Գասպարյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

13.08.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ